ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » դեկտեմբերի 2018 թվականի N 425

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎՐԵԺ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 2-րդ մասով, 168-րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1.3-րդ մասով, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով, հաշվի առնելով, որ 2018 թվականի դեկտեմբերի 1-ին լրացել է Վրեժ Թորոսյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի ժամկետը, սակայն Վրեժ Թորոսյանը 2018 թվականի նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 27-ը ներառյալ գտնվել է ամենամյա արձակուրդում, որի պատճառով աշխատանքից ազատման ամսաթիվը տեղափոխվել է՝ ***որոշում եմ.***

1.Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկ. 2.3-20) ժամանակավոր պաշտոնակատար Վրեժ Թորոսյանին 2018 թվականի դեկտեմբերի 28-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2015 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված թիվ 10 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2.Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ սույն որոշումն ընդունել ի գիտություն:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 28
ք.Սպիտակ